

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«.....»2016թ. N.....-Ն

«ՓՈՔՐ ՄՀԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, «ՓՈՔՐ ՄՀԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ԵՎ «ԱՊԱՐԱՆԻ
ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԶԵՎՈՎ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1602-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 13-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Դադարեցնել «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության Նուբարաշենի մասնաճյուղի գործունեությունը (պետական գրանցման համարը՝ 278.065.811663):
2. «Փոքր Միեր» կրթահամալիր» (պետական գրանցման համարը՝ 264.210.07049) և «Ապարանի ռազմամարզական վարժարան» (պետական գրանցման համարը՝ 49.210.00390) պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով

վերակազմակերպել՝ ստեղծելով «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:

3. «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ նրան վերապահելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով նախատեսված լիազորությունները:
4. Սահմանել, որ «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Փոքր Միեր» կրթահամալիր» և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է, և դրանց իրավունքներն ու պարտականություններն անցնում են «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ փոխանցման ակտերին համապատասխան:
5. «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության՝
 - 1) առարկան հանրակրթական հիմնական (1-9-րդ դասարաններ) (ընդհանուր և մասնագիտացված) ծրագրերի իրականացումն է,
 - 2) նպատակը սովորողի կողմից հանրակրթության պետական չափորոշիչի առարկայական ընդհանուր և ռազմաուսումնական մասնագիտացված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, սովորողի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, մասնագիտական կողմնորոշումը, ծրագրերին համապատասխան սովորողների դաստիարակության ապահովումն, ինչպես նաև ռազմաուսումնական մասնագիտացված կրթություն ստանալու համար պայմանների ստեղծումը և խնամքի ու պաշտպանության ապահովումը:
6. Թույլատրել «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
 - 1) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում,
 - 2) համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում,

3) ուսումնասիրտադրական գործունեության իրականացում և արտադրանքի իրացում,

4) արտադարձրոցական դաստիարակության կազմակերպում

7. Սահմանել, որ

1) 2017-2016 ուսումնական տարվանից «Նուբարաշենի մասնագիտացված դարձրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 10-րդ դասարանի ընդունելություն չի կատարվելու՝ ավագ դարձրոցի սովորողների ուսուցումն իրականացնելով մարման սկզբունքով

2) «Նուբարաշենի մասնագիտացված դարձրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կատարվում են ռազմաուսումնական հաստատության համար նախատեսված չափերով ու պայմաններով:

8. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել «Նուբարաշենի մասնագիտացված դարձրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, միաձուլման մասին պայմանագիրը, փոխանցման ակտերն ու սեփականության իրավունքով նրան հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը.

2) «Նուբարաշենի մասնագիտացված դարձրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաստատումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Նուբարաշենի մասնագիտացված դարձրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը.

3) ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1602-Ն որոշման 3-7-րդ կետերում նշված հողամասերի և անշարժ գույքի կազմի ճշգրտումը և եռամսյան ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ նշված գույքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը անհատույց օգտագործման հանձնելու համար:

4) 8-րդ կետի 1-2-րդ ենթակետերով նախատեսված աշխատանքների ավարտից հետո 6-ամսյա ժամկետում ապահովել Երևան Նուբարաշեն 6 փողոց, 2 հասցեում գտնվող շենք-շինությունների Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու գործընթացը:

9. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն վորոշման 8-րդ կետով 4-րդ ենթակետով նախատեսված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել որոշման նշված հասցեում գտնվող շենք-շինությունների համար անհատույց անժամկետ օգտագործման պայմանագիր և դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:
10. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1602-Ն որոշման.
- 1) 1-ին և 2-րդ կետը՝ համապատասխանաբար NN 1 և 2 հավելվածները,
 - 2) 8-15-րդ կետերը:
11. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից ներկայացված հաշվարկների հիման վրա 2017 թվականի պետական բյուջեում սահմանված կարգով կատարել վերաբաշխում:
12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

L. Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՓՈՔՐ ՄՀԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, «ՓՈՔՐ ՄՀԵՐ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ԵՎ «ԱՊԱՐԱՆԻ
ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԶԵՎՈՎ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1602-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Անհրաժեշտությունը

«Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության Նուբարաշենի մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու, «Փոքր Միեր» կրթահամալիր» և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ կառավարության 29 սեպտեմբերի 2016 թվականի նիստի N 38 29.7/[374058]-16 արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետի կատարման շրջանակներում՝ կրթության ոլորտում գործող ՊՈԱԿ-ների թվաքանակի կրճատման և դրանց գործունեության օպտիմալացման նպատակով:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

Ներկայումս գործում են «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները

Վերակազմակերպման արդյունքում կրթահամալիրի Նուբարաշենի մասնաճյուղի հենքի վրա կստեղծվի հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն այսուհետ՝

մասնագիտացված դպրոց), որի գործունեության առարկան հանրակրթական հիմնական (1-9-րդ դասարաններ) ծրագրերի իրականացումն է, իսկ նպատակը՝ սովորողի կողմից հանրակրթության պետական չափորոշիչի առարկայական ընդհանուր և մասնագիտացված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, սովորողի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, մասնագիտական կողմնորոշումը, ծրագրերին համապատասխան սովորողների դաստիարակության ապահովումը, ինչպես նաև՝ մասնագիտացված կրթություն ստանալու համար պայմանների ստեղծումը: Վերը նշված գործընթացների իրականացման ողջ ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կապահովի ավագ դպրոցի սովորողների ուսումնառության բնականոն գործընթացը:

Միաժամանակ աշխատանքներ կկատարվեն՝ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1602-Ն որոշմամբ կրթահամալիրին ամրացված և Քանաքեռավանում գտնվող սեփականության իրավունքով հանձնված գույքի կազմի ու արժեքների ճշգրտման ուղղությամբ՝ դրանք ՀՀ պաշտպանության նախարարությանը սահմանված կարգով հանձնելու համար:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է վերոնշյալ ՊՈԱԿ-ների միաձուլման արդյունքում՝ ապահովել դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության Նուբարաշենի մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու, «Փոքր Միեր» կրթահամալիր» և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1602-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության Նուբարաշենի մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու, «Փոքր Միեր» կրթահամալիր» և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Նուբարաշենի մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1602-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: